

1636-ին Ատամ Օլբրիևս կը վկայէ, որ Հայաստանի եւ Վրաստանի Պարսկական նահանգները «ամենաազնիւ եւ հարստագոյններն են բոլոր Պարսկական նահանգներուն մէջ, մասնաւորաբար անոր համար, որ կ'արտադրեն աւելի մետաքս, քան թէ որեւէ ուրիշ նահանգ»:(1) Կ'աւելցնէ թէ Շամախի «բնակիչները մասամբ Հայեր են եւ մասամբ Վրացիներ ... իրենց մեծագոյն վաճառականութիւնը մետաքս եւ բամպակ հիւսուածեղէններ են, որոնցմէ այնքան մեծ քանակութեամբ կ'արտա-

հրամանատարը մեր Գարալման-պաշիէն (որ Զուղայեցի մըն էր) պահանջեց իրեն յանձնել բոլոր թուրք վաճառականները որոնք մեր խումբին մէջ էին, որ չկրցաւ այս պահանջին չանսալ, սակայն հաւաստեց որ իր առաջնորդութեան տակ բացի քրիստոնեաներէ եւ հրեաներէ ոչ ոք կար, որուն վրայ ան հրամանատարին ըրաւ առատ նուէր մը 250 տուարի, որ հայթայթուելու համար մեր վրայ բաժնուեցաւ:» (Անդ էջ 504) Կարեւոր է երեւոյթը որ թուրք-Պարսիկ պատերազմներու միջոցին հայ կամ հրեա վաճառականները զերծ էին յարձակումէ եւ կրնային քիչ շատ ազատութեամբ առեւտուր ընել կամ ճամբորդել իրարու դէմ պատերազմող երկիրներուն միջեւ:

(1) The Voyages and Travels... by Adam Olearius, London, 1669, pp. 146-147:

դրուի, որ կրներ, նոյնիսկ երախաներ անկից կը շահին իրենց ապրուստը՝ պատրաստելով եւ մանեղով մետաքս եւ բամպակ (այլ) ջուլհակներու համար»:(2) Իսկ Ֆրանսացի ուղեգիր Ճան Շարաէն 1673-ին կը վկայէ, որ «Վրաստանի երկիրը կ'արտադրէ նաեւ մեծ քանակութեամբ մետաքս, թէեւ ոչ իսկ կէսին չափ այն քանակին, որ կը հաւաստէ ճամբորդներու մեծ մասը: Երկրին բնակիչներուն մեծ մասը զիտեն մետաքսին գործելու կերպը, զայն կը տանին թուրքիա, դէպի Էրզրում, եւ յարակից կողմերը, եւ մեծ առեւտուր կ'ընեն»:(3) Ան կը հաստատէ թէ Վրաստանի մէջ Հայոց թիւը Վրացիներէն մեծ է, թէ Հայերը աւելի հարուստ են եւ գրեթէ բոլոր գործերուն տէր:(4)

Մենք տեսանք որ ասոնցմէ զատ եւ աւելի կանխազոյն ուղեգիրներ գրեթէ բոլորն ալ միարեւրան կը հաւաստեն, թէ Վրաստանի, Կովկասեան Հայաստանի եւ Կովկասի միւս շրջաններու, Պարսկաստանի, Հնդկաստանի եւ Սիւրիոյ ինչպէս նաեւ թուրքիոյ մետաքսի առեւտուրը մեծագոյն մասով հայերու ձեռքն էր:

(2) Անդ էջ 165:

(3) The Travels... 1686, Vol. I. pp. 189-190:

(4) Անդ էջ 191: